

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն Ք

ՆԿԱՐԶԱԳՅՏ ԱՅՎԱԶՈՎԱԲԻԻ

Պ Ա Տ Կ Ե Ր Ա Հ Ա Ն Դ Է Ս Ն Ի Փ Ս Ի Զ



ԱՆԱՌՎ փարիզ իւր նկարչութեան տարեկան ցուցա-
հանդէսը 'ի Salonն' (Դահլիճն) կը հրաւիրէ անդ անուն
ստանալու կամ համբաւնին վերահաստատելու ըզձա-
ցող անհամար նկարչաց մրցումն ու եռանդն . և ա-
հա հեռագոյն այդ ժխորէն՝ հայազգի նկարչապետ մի
'ի Ռուսաստանէ հետք բերած 28 նկարուց մասնական՝
հանդէս մի կ'ընծայէ 'ի նշանաւոր սրահն Durand-Ruelի՝²

Յոհան Ալվազովսկի հանրածանօթն Ռուսաց, որոյ արուեստական
պարծանաց յիննամեայ յորելեանը խնդուլթեամբ կատարեց Պետր-
բուրգի ակադեմիայն յամին 1887, փարիզու՝ արուեստից մայրաքա-
ղաքիս՝ դատաստանն ևս իւր յաջողութեանց վրայ յաւելլոյ գիտ-
մամբ, յայտ երկու ամս 1887-89 ձեռակերտեալ գերայոյն գործովքն
կը ներկայանայ Գաղղիոյ :

« Անծանօթ չիմ քաղաքիս, այլ ժամանակակից սերունդն մտա-
ցած է զիս », կըսէր ինձ 73ամեայ առոյգ Ալվազեանն, և կը պատ-
մէր ինձ, հանդէսը բանալէ քանի մի օր յառայ՝ հսկելով իւր նկա-
րուց զետեղման, և անոնց նկատմամբ հրաման մի տալու համար խօս-
քըն ընդմիջելով, կը պատմէր ինձ իւր նշանաւոր կենաց ընթացքն,
հայկական վարժարանի մը մէջ աշակերտելն, Պետրբուրգի ակադե-
միայէն ելնելն, իտալիոյ ուղևորութիւնքն, յամի 1844 փարիզու Sa-
lonի մէջ հանդիսադրելն և ոսկի միտալ առնուլն . 1857ին Chevalier

1. Ի Palais de l'Industrie, Champs-Élysées արբունի վարազափողոցին վրայ :
2. Ի Rue Le Pelletier և Rue Lafitte.

de la Légion d'honneur շքանշանով պատուիրն, յետ Խորհմու պատե-
րազմին վերստին 'ի Փարիզ գալն և Անգլիա երթալն, նորա ասիունքը
հետազօտելու համար. զի ծոփն՝ որ դամ մի իւր կեանքը վտանգի մէջ
դրած էր, մինչև կորսուած համարել զինքն իւր բարեկամաց, ծոփն՝
իւր մտաց սեւեհալ պատկեր դարձած էր և ամենուրեք ծովը կը
խորհէր ու կը փնտռէր :

Յանցեալ ամին ¹, աշխարհահանդիսին առթիւ, ըսած էր ինձ նը-
կարչապետն, կ'երթամ ամսուան մը համար 'ի Պիտուից, տեղւոյն
ծոփն ուսումնասիրելու համար, և կը նկարէր անգ այսօր 'ի տես
դրուած հինգ նկարքը, յորս ծագող և խոնարհող արևու մը լոյսն ու
ծովուն զուարթութիւնն իրարու հետ կը մրցին :

Իր ճանաչէր նա ծովուն ահաւորութիւնը անձին փորձառութեամբ
բըն, կը ճանաչէր նորա մեղամաղձիկ կերպարանքն յափանց Անգլիոյ.
կը մնար նորա կենդանածիծաղ երեւոյթն ևս ճանչնալ, յորմէ վերջը
քաշուելով 'ի խաղաղաւէտն Թէոդոսիա, աչքն 'ի պաշտելին իւր
Սեւ ծոփն յառեալ՝ հանապազ դիտեց, ուսումնասիրեց, փորձեց և
հուսկ ուրեմն ստացաւ այն գաղանկքն՝ իւր նկարուց մէջ մեծ դեր
խաղացող երևակայութիւնը մարմնաւորելու իւր պատկերաց վրայ,
իւր 28 նկարքը ծովու կեանքը կը ներկայացունեն ամէն երեւոյթնե-
րոփն : Սրոնք կ'ախորժին նկատել նկարի մը վրայ գունոց զուարթու-
թիւնը և աղաղակող երեւոյթքն՝ զարմացմամբ պիտի դիտեն Այվա-
զովսկիի նկարուց մեծամասնութիւնը. մինչդեռ սակաւ պատկերք
նիւթ պիտի ընձեռեն անոնց՝ որ կը վերադասեն նիւթոյ մը հաւա-
տարիմ՝ ներկայացուցումը և գունոց ճշգրտութիւնը, պարզութեամբ
և համեստութեամբ հանդերձ :

Հանդէսն բացուելու նախընթաց օրն էր Պր. Այվազեանն մաս-
նաւոր հրամանագրաւ ազատ մուտք շնորհած էր ինձ 'ի 1 Ապրիլէ ց 15
Մայիսի. ժամանակ տեղութեան ցուցահանդիսին. և ես հանդար-
տութեամբ կը դիտէի նկարքը, երբ յանկարծ մտեցաւ ինձ նկարչա-
պետն ու ըսաւ. Անուշտ հայկակա՛ն՝ նիւթ մի կը փնտռես իմ նկա-
րուցս մէջ : Այո՛, Տէր, լաւ գուշակեցիք միտքս, պատասխանեցի. ու
տարաւ զիս մերձակայ սրահին մէջ ու ցուցուց հետուէն և ըսաւ. Ա-
հա մեր Հայաստանն : Մեծազիր պատկեր մ'էր. ցանկին մէջ թիւ 3
կը կրէր, այս վերնագրաւ, Après le déluge, près de l'Ararat : Այրա-
րատ լեռը՝ իւր տապանակիր սրբազան գագաթը կը խառնէ 'ի մի-
գամած ամպս. Նոյ և որդիք և անասունք առաջին անգամ ոտք կը
կոխեն աստուածացոյց հողոյն վրայ. կարծես երկիրն դեռ անհաս.

1. Հռչակաւոր նկարչապետին ծանօթացումն շնորհակալութեամբ հանդերձ
պարտական եմ Հ. Քերովիէ. Վ. Քուչնեքեանի, արժանապատիւ Աւախորդի
'ի Թէոդոսիա Տարիոյ, իւր անցեալ ամին աշխարհահանդիսին առթիւ 'ի
Փարիզ :

տատ է իրենց ոտքին՝ տակ. թռչունք՝ չրկակայ ճախճախուտ վայրաց
և այն ընդարձակածաւալ յուրերուն վրայ, յետ երկարատև բանտ-
արգելութեան առաջին թռիչը կ'առնուն, և առաջին համբոյրն կու-
տան համասարած լճաց, որ չիչ ատենէն տեղի պիտի տան ցամաքին,
յորում մարդկութիւնն իւր երկրորդ որորանը պիտի գտնէ, պիտի
բազմանայ. և յետ զարգանալոյ, ազգ ազգ յաջորդելով պիտի թռ-
զու լքանէ այդ աստուածընտիր աշխարհը ազգաց արհամարհու-
թեան նշաւակ, Նկարին մառախուղն և միգամած լետուն սրբան նը-
մանութիւն կ'ընծայեն մեր հայրենեաց մառախլապատ գոյութեանն:

Բացման առաջին օրն, 1 Ապրիլի, այցելողաց առաջինն էր Baron
de Mohrenheim Ռուսաց դեսպանն և լիազօր պաշտօնեայն, որ ման-
րամանորէն դիտեց ու տեղեկացաւ նկարուց. և յետոյ ծանոյց նկար-
չապետին և Durand-Ruelի որ Հասարակապետութեան Նախագահն,
Carnot, վաղուան օրը այց պիտի ելնէր հանդիսին, Երկրորդ օրը՝ այ-
ցելուք հաճութեամբ կը դիտէին քաղաքին բնիկ և օտարազգի՝ մա-
նաւանդ Ռուսաց՝ ազնուականութեան հետ՝ ես և Նախագահն Car-
not, որուն երկու հոգի կ'ընկերէին 'ի ցոյցս նկարուց. յաջմէ Ռու-
սաց դեսպանն և 'ի ձախմէ Այվազեանն կարմիր մետաքսեայ ուսընդ-
անութը գրած, Պատուոյ լեգէնի շքանշանն 'ի կուրծս: Որովք որ
առաջին անգամ կը տեսնէին զնա, յիսնամեայէն աւելի չէին կարծեր
այդ բարձրահասակ, ուղիղ, լայն ուսովք և ճերմակախառն ալեօք ու
մօրուօք նկարին: Ռուս իշխանուհի մի, յետ մեկնելոյ Նախագահին,
մտտենալով Այվազովսկիի և իւր զարմանքը յայտնել վերջ, ըսաւ.
Մինչուն երազութիւն և անխոնջութիւն մը կը նկատեմ՝ ձեր այսչափ
նկարքն այնքան քիչ ժամանակի մէջ աւարտելուն մէջ. և յաւել ժըպ-
տերով. Արդեօք գիշերներն ես այխատեցաք:

Նախագահն հետաքրքրութեամբ կ'ունկնդրէր լաւ գողդիախօս
Այվազեանին բացատրութեանց. և կանդ առաւ մասնաւորապէս եր-
կու նկարուց առջև, որոց միոյն տիտղոսն է. «Օրհասական վայր-
կեանն յՈվկիանու», և միւսոյն «Աւերումն Պոմպէի»: Առաջինն՝ որ մե-
ծագոյնն է 'ի նկարս՝ եռակայմ նաւ մի կը ներկայացունէ, լեռնա-
ցեալ ալեաց մէջ ըմբռնեալ և կիտով չափ ընկղմեալ. նաւն ու մար-
դիկն ալ կորսուած համարելի են. միայն նաւուն կայմերն յուրէն
զուրս բանի մի յուսահատ անգր ապաստանելոց վերջին յոյսն են
մտտալուտ կորստեան դէմ. 'ի զմէր ծովուն անագործութեան գը-
թութիւն կը պաղատին, արդէն թխագոյն առկախ ալիք մը մերձ
է վրանին տապալել և յղել վնասս 'ի խորս ծովուն: Միւս նկարն՝
սակաւ մի փոքրագոյն՝ կը ցուցանէ զՊոմպէա քաղաքն հրացեալ լա-
ւայի զոհ եղած, անհետանալով կարմրագոյն փոշոյ և հրոյ հեղեղի
մը տակ. արտաշարժ եղականութեամբ և ներկուտ արուեստաւոր ձե-
ռաց զործ:

Այլ նկարքն կը ներկայացընեն Միջերկրական ծովուն, քանի, Պիտոիցի և Աթէնքի ծովափունքը, Ովկիանոսի մառախլապատ կամ խոնարհող արևու տպաւորութիւն 'ի ջուրս, ալեաց փրփուրն ժայռից վրայ, արծաթեայ լուսնոյ մը կախարդիչ անդրադարձութիւնն, Կ. Փոլսոյ Եօթն Աշտարակաց ալէկոծ որմունքն, Տօլմա - Պահչէի վճիտ ու հայելատիպ լճակն, Կովկասու և Ղրիմու ափունքը, Կէօթէփէի և Այու - Տաղի ծովահայեաց բարձունքը, Այլ նկարուց մեծամասնութիւնն զՍեւ ծովն կը ներկայացունէ, զոր կէս դարու չափ իւր աչաց առջև ունեցած է նկարիչն և զոր կը զգուէ իւր վրձնաւն նորա վայրենի ահաւորութեան և թխազոյն երանգոց մէջ:

Նախագահն մերթ ընդ մերթ իւր զարմանքը ցուցանելէ յետոյ Այվազովսկիին, 'ի վերջոյ' ներկայ եղող բազմութեան առջև մասնաւոր կերպով բացայայտեց իւր զգացած համարումն և համակրութիւնն Պետրուրգի Ակադեմիոյ Խորհրդոյն նշանաւոր անդամոյս:

Հետեւեալ ցանկն կը ներկայացունէ Պր. Այվազենին 28 պատկերաց ցուցահանդէսն, ըստ կարգի թուահամարի ցուցակին.

1. Ահեղաւքանչ վայրկեանն յՈվկիանու.
2. Արզոնաւորդք յափունս Կողքիսի (Կովկաս).
3. Յետ ջրհեղեղին, Արարադայ (Մասիսի) քով.
4. Պոմպէի քաղաքին կործանումն (տեսիլ ծովու կողմէն).
5. Ալէքեկ խարակ, Պիտոիցի մօտ.
6. Պիտոիցի ծովափունքն (գիշերային տեսիլ).
7. Արեգական մուտքն, - Սպանիոյ ափունքն. տեսիլ 'ի Պիտոիցէ.
8. Մարմարայի ծովն և Եւտի - Գոշէ գոեակն (Կ. Պոլիս).
9. Ս. Իսահակ Մայր եկեղեցին՝ Հմեռնային օր մը (Պետրուրգ).
10. Հարթ հաւասար հանդարտութիւն ծովու.
11. Պատրաստութիւնք Պոսիդոնի հանդիսին, անոր տաճարին մօտ.
12. Հին տաճար յափունս փայտնեան ծովախորշին (Աթէնք).
13. Կէօթէփէի հրուանդան (Ղրիմ'). 14. Սև ծովն ալէկոծեալ.
15. Ծովափն Կովկասու յԱտէր.
16. Հրուանդան Այու - Տաղի (Ղրիմ').
17. Էպրուզ ծովու կողմէն (Կովկաս). - 18. Արևուն մտնելէն վերջը.
19. Տեղատուութիւն ծովու, 'ի Պիտոից.
20. Ասպատակք ծովու Արշիպեղազոսին վրայ.
21. Վոսիոր և Տօլմա - Պահչէի պալատն.
22. Մօնթէ - Քարլոյի ծովեզրն. - 23. Մառախուղ.
24. Գափրի կզղին (արևելեան կողմէն).
25. Մերձակայքն քանի, (Cannes).
26. 27. 28. Ծովային տեսարանք.